ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2023 թվականի N 0901-Ա

ԷՄԻՆ ՌԱԶՄԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի 02-Ն հրամանով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի լուսավորություն» ՀՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 27-ի եզրակացությունը, Էմին Ռազմիկի Մխիթարյանի 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 3844 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Էմին Ռազմիկի Մխիթարյանին 2023 թվականի հունիսի 28-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի լուսավորություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում:
2. Էմին Ռազմիկի Մխիթարյանի հետ կնքել 5 տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր:
3.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի լուսավորություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահին՝ իրազեկություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հունիսի 28
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2023 թվականի N 0902-Ա

ՌԱՖԻԿ ԿԱՐԱԽԱՆՅԱՆԻՆ ՆԱՐԵԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով, Հայաստանի հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարան մուտքագրված Ռաֆիկ Կարախանյանի 2023թ. հունիսի 23-ի թիվ 3776 դիմումը, Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 10 նիստի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Ռաֆիկ Երվանդի Կարախանյանին /ծնվ.՝ 29.10.1941թ./ նշանակել խնամակալ դատարանով անգործունակ ճանաչված Նարեկ Դավիթի Հայրապետյանի /ծնվ.՝ 06.03.1995թ./ նկատմամբ:

2.Ռաֆիկ Կարախանյանին վերապահել ի շահ խնամարկյալի, առանց հատուկ լիազորագրի կնքել անհրաժեշտ գործարքներ, հանդես գալ նրա իրավունքների ու շահերի պաշտպանությամբ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:

3.Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ համայնքի ղեկավարին կամ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ՀՀ Վարչական դատարան:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ. հունիսի 28
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2023 թվականի N 0903-Ա

ԳՈՀԱՐ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1599-Ն որոշման 1-ին կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Պողոսյանի 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 3853 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Պողոսյանին տրամադրել ամենամյա արձակուրդ՝ (01.07.2022թ - 01.07.2023թ. ժամանակահատվածի համար) 2023 թվականի հուլիսի 1-ից՝ 30 աշխատանքային օր:

2.Գոհար Պողոսյանին՝ աշխատանքի ներկայանալ 2023 թվականի օգոստոսի 7-ին:
3.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահին՝ ի գիտություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հունիսի 28
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2023 թվականի N 0904-Ա

ԱՆԴՐԱՆԻԿ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1599-Ն որոշման 1-ին կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անդրանիկ Դարբինյանի 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 3854 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անդրանիկ Դարբինյանին տրամադրել (01.07.2022թ - 01.07.2023թ. ժամանակահատվածի համար) ամենամյա արձակուրդ՝ 2023 թվականի հուլիսի 1-ից՝ 30 աշխատանքային օր:

2.Անդրանիկ Դարբինյանին՝ աշխատանքի ներկայանալ 2023 թվականի օգոստոսի 7-ին:
3.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահին՝ ի գիտություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հունիսի 28
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2023 թվականի N 0905-Ա

ԱՐՄԵՆ ԳԱԼՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1599-Ն որոշման 1-ին կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմեն Գալոյանի 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 3852 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմեն Գալոյանին տրամադրել ամենամյա արձակուրդ՝ (01.09.2022թ - 01.09.2023թ. ժամանակահատվածի համար) 2023 թվականի հուլիսի 10-ից՝ 30 աշխատանքային օր:

2.Արմեն Գալոյանին՝ աշխատանքի ներկայանալ 2023 թվականի օգոստոսի 14-ին:
3.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահին՝ ի գիտություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հունիսի 28
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 0906-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԹԻՎ 0872-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 26/06/2023թ. N Կ-26062023-04-0088 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 20-ի թիվ 0872-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն.

1) Որոշման 1-ին կետի «64.1» թվերի փոխարեն կարդալ «88.8 »:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հունիս 29
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 0907-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՔԻ ԼՈՒԿԱՇԻՆ ԳՅՈՒՂԻ , Ա.ԹԱՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 45 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՀԱՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետությանկառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ 4-րդ կետով ,հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում 04-047-0011-0005 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշում, ըստ 11.10.2011թ. ժառանգության իրավունքի և Վահան Իսկանդարյանի 06.06.2023թ թիվ 3427 դիմումը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վահան Իսկանդարյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում գտնվող 04-047-0011-0005 կադաստրային ծածկագրով 500.0 քմ մակերեսով տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 100.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրանց՝ սեփականության իրավունքով, իսկ 144.0 քմ հողամասն օտարել ուղիղ վաճառքի միջոցով, հողամասի կադաստրային արժեքի 30 %-ի չափով՝ 1 քմ հողամասի համար՝ 154.44 ՀՀ դրամ, ընդհանուր 22240 /քսաներկու հազար երկու հարյուր քառասուն/ դրամ:

2.Վերականգնել Վահան Իսկանդարյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում գտնվող 04-047-0011-0005 կադաստրային ծածկագրում գտնվող 0.05 հա օրինական հողամասի վրա 1964թ. կառուցված 93.5 քմ մակերեսով բնակելի տան, 1964թ. 6.8քմ մակերեսով մառանի և 1964թ. 9.0քմ մակերեսով խորդանոցի նկատմամբ:

3.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Վարդան Վարդանյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում գտնվող 04-047-0011-0005 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Լուկաշին, Ա.Թամանյան փողոց, 45:

5. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հունիս 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 0908-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատվածկարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ դեկտեմբերի 5-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ա որոշումը,Անդրանիկ Վարդանյանի 03.05.2023թ. թիվ 2659 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի Շահումյան փողոց, 64 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄԵՄ

1. Անդրանիկ Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 0248006/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքնի գյուղ Մյասնիկյան Շահումյան փողոց, 64 հասցեում գտնվող

գույքային միավորների՝ 0.12 հա օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տունը 47.7 քմ. արտաքին և 37.6 քմ ներքին մակերեսով, ավտոտնակը՝ 32.7 քմ արտաքին և 28.1 ներքին մակերեսով և պարիսպները 6.0 քմ. մակերեսով ճանաչել օրինական:

2 .Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր արտաքին 47.7 քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 743.0 << դրամ ընդհանուր 35441 (երեսունհինգ հազար չորս հարյուր քառասունմեկ) << դրամ, ընդհանուր արտաքին 177.4 քմ մակերեսով ինքնակամ օժանդակ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ 445.8 << դրամ ընդհանուր 79085 (յոթանասունինները հազար ութանասունհինգ) << դրամ, ընդհանուր շինությունների օրինականացման գումարը կազմում է 114526 (հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր քսանվեց) << դրամ:

3. Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի Շահումյան փողոց, 64 հասցեում գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023T2GLCM:

5.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հունիս 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 0909-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատվածկարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ դեկտեմբերի 5-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ա որոշումը,Հենրի Թորոսյանի 14.06.2023թ. թիվ 3625 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Այգեվան գյուղի 20-րդ փողոց, 5 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄԵՄ

1. Հենրի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 070673/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքնի գյուղ Այգեվան 20-րդ փողոց, 5 հասցեում գտնվող գույքային միավորների՝ 0.082 հա օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տունը 143.8 քմ. արտաքին և 117.7 քմ ներքին մակերեսով և զուգարանը՝ 2.3 քմ արտաքին և 1.3 ներքին մակերեսով ճանաչել օրինական:

.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր արտաքին 143.8 քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 874.0 ՀՀ դրամ ընդհանուր 125681 (մեկ հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր ութանասունմեկ) ՀՀ դրամ, ընդհանուր արտաքին 2.3 քմ մակերեսով ինքնակամ օժանդակ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ 524.4 ՀՀ դրամ ընդհանուր 1207 (մեկ հազար երկու հարյուր յոթ) ՀՀ դրամ, ընդհանուր շինությունների օրինականացման գումարը կազմում է 126887 (մեկ հարյուր քսանվեց հազար ութ հարյուր ութանասունյոթ) ՀՀ դրամ:

3. Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվան գյուղի 20-րդ փողոց, 5 հասցեում գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023SEDDLZ:

5.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հունիս 30

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունիսի 2023 թվականի N 0910-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ, 13-րդ կետերի <<ա>> ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N 600-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>>, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 5-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2023թ. մայիսի 23/ և Պայծառ Միքաելյանի 20.06.2023 թվականի թիվ 3708 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Պայծառ Միքաելյանի, Ռուսլան Միքայելյանին, Կարեն Միքաելյանին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Շինարարների 23 հասցեում 0.0305 հա մակերեսով բնակելի կառուցապատման նշանակության հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 19.2 քմ ներքին և 35.4 քմ արտաքին մակերեսով, պարիսպը՝ 0.2 քմ մակերեսով ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր 35.6 քմ մակերեսով ինքնակամ կառուցված շինության օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1673.0 ՀՀ դրամ ընդհանուր՝ 59559 (հիսունինները հազար հինգ հարյուր հիսունիններ) ՀՀ դրամ:

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Շինարարների 23 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023UV7ZSS:

5.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ.հունիսի 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 0911-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատվածկարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ դեկտեմբերի 5-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ա որոշումը,Ալբերտ Ասատրյան 31.05.2023թ. թիվ 3328 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի 04-047-0022-0015 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄԵՄ

1.Ալբերտ Ասատրյանին, Անահիտ Գաբրելյանին, Նարինե Ասատրյանին, Նունե Ասատրյանին և Արթուր Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքնի Լուկաշին գյուղում 04-047-0022-0015 կադաստրային ծածկագրով գույքային միավորների՝ 1200.0քմ օրինական հողամասի վրա 1982թ. կառուցված 224.4քմ մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:

2. ՀՀ Կառավարության 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

3.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Ալբերտ Ասատրյանին, Անահիտ Գաբրելյանին, Նարինե Ասատրյանին, Նունե Ասատրյանին և Արթուր Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքի Լուկաշին գյուղի 04-047-0022-0015 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզ, Արմավիր համայք, Լուկաշին գյուղ, Հ.Ավետիսյան փողոց, 43:

5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում գտնվող 04-047-0022-0015 կադաստրային ծածկագրով գույքի հաշվառման (չափագրման)տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023EW2LMX:

6.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. Հունիս 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 0912-Ա

ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի հ. 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Միսակ Խլղաթյանի 07.03.2023թ. թիվ 1436 դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ. Բաղրամյան փողոց 8/1 կից հասցեում գտնվող անշարժ գույքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 29122022-04-0132 վկայական) զբաղեցրած տարածքի ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով լրացուցիչ հողամաս տրամադրելու մասին և հաշվի առնելով այն, որ ընդլայնման նպատակով, լրացուցիչ տրամադրման համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ. Բաղրամյան փողոց 8/18 հասցեում գտնվող հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 15052023-04-0060 վկայական) փաստացի մակերեսը կազմում է 33.0 քմ մակերես, որի ուրվագծային չափերն ու դիրքը թույլ չեն տալիս, որ այն դառնա առանձին հրապարակային սակարկությունների առարկա: Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի հ.102-Ն որոշմամբ հաստատված Արմավիր համայնքի գլխավոր հատակագծի համաձայն՝ հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ. Բաղրամյան փողոց 8/1 հասցեին կից Հ. Բաղրամյան փողոց 8/18 հասցեում գտնվող 33.0 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով կադաստրային գնի չափով 1քմ-ը 4441.8 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 146580 /հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր ութսուն/ ՀՀ դրամով օտարել (վաճառել) Միսակ Խլղաթյանին:

2.Ընդհանուր գույքին տալ միասնական հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք Հ. Բաղրամյան փողոց 8/18:

3.Լիազորել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի ղեկավարի անունից, հողօգտագործողի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռքբերողի կողմից 15-օրյա ժամկետում հողամասի կադաստրային արժեքը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքին պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

6.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. հունիսի 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 0913-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

